

# Գաղտնի



ՅՈՒՆՆԱ ՍԴԱՅՐԻ



ԴԱՍԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

# Հայրի



*Յոհաննա Ապաշրի*

Վերապատումը՝ Ռոն Ռանդալի • Նկարագարումը՝ Իվա Սաշևայի  
Անգլերենից թարգմանությունը՝ Ալվարո Զիվանյանի



**ԶԱՆԳԱԿ**  
ՀՐԱՏԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ

## ՍԱՐՆ Ի ՎԵՐ

Ամառային արևոտ առավոտ էր: Հինգ տարեկան մի աղջնակ տնքտնքալով բարձրանում էր սարն ի վեր: Փոքրիկի անունը Հայդի էր: Ծնողները մահացել էին, երբ նա դեռ բոլորվին մանկիկ էր: Աղջկան պահել մեծացրել էր մորաքույրը՝ Դիթին: Հիմա էլ նա աղջկա հետ էր: Ճանապարհին նրանք հանդիպեցին Բարբելին՝ նույն գյուղից մի կնոջ: Բարբելը ողջունեց նրանց և հետաքրքրվեց.

— Այդ ո՞ր ես տանում Հայդիին:

— Տանում եմ իր պապի մոտ, — պատասխանեց Դիթին:

— Նա երբեք չի կարողանա երեխայի մասին հոգ տանել, — վրդովվեց Բարբելը:

— Ուրիշ ճար չունեմ, — տխուր արձագանքեց Դիթին, — Ֆրանկֆուրտում գործ եմ գտել, իսկ աղջկան հետս տանել չեմ կարող:

— Բայց, ախր, ծերունի իսկական մենակյաց է. ո՞չ գյուղ է *իջնում. ո՞չ եկեղեցի գնում: Ունեցած-չունեցածն էլ երկու այծ է:* Ո՞նց է երեխա պահելու:

— Նա երեխայի հարազատ պապն է, և աղջկան նրա հետ լավ կլինի, — պնդեց Դիթին: — Իսկ ո՞ր է Հայդին:

— Պետերի՝ այծարած տղայի հետ է:

Հայդին քայլում էր իրենից մի քանի տարով մեծ մի տղայի

հետ: Երկուսն էլ ոտաբոբիկ էին: Սարն էին մագլցում՝

ուրախ զրույց անելով ու ծիծաղելով: Նրանցից քիչ

հեռու վազվզում էին այծերը: Երեխաներին

նայելով՝ Դիթին ժպտաց:









— Հայդին այստեղ իրեն կզգա, ինչպես տանը,— ասաց նա Բարբեկին ու թեթևացած շունչ քաշեց:

Հայդիի պապը մոայլ ծերուկ էր: Նրա սրտով չէր, որ թոռանն իր մոտ են թողնելու: Իսկ Հայդին շատ գոհ էր. մեկ նայում էր սոճիներին, մեկ ականջ դնում քամու սուլոցին:

Պապը վերցրեց Հայդիի շորերի կապոցը:

— Սա մի տեղ պահենք,— ասաց նա,— չնա ուզում կոշիկների հագնել:

— Չէ, — ասաց Հայդին,— ուզում եմ այծիկների նման բոբիկ վազվզել:

Ծերունին ժպտաց. տարիներ շարունակ չէր ժպտացել:

— Արա՛, ինչպես սիրտդ է ուզում:

Պապի տունն ընդամենը մի սենյակ էր. անկյունում մի հատիկ մահճակալ էր դրված: Հայդին հետաքրքրվեց՝ ինքը որտեղ է քնելու:

— Քնիր, որտեղ կուզես,— ասաց ծերունին:

Սանդուղքը հենած էր հարդի դեզին, և Հայդին վեր մազլցեց: Գրկելով անուշահոտ դեզը՝ աղջիկն ուրախությունից ճչաց.

— Ա՛յ հենց այստեղ էլ կքնեմ:


— Պապը սավան բերեց ու փռեց հարդի վրա, նաև վերմակ, որ Հայդին չմրսի:

Ընթրիքին հաց ու պանիր կերան: Պապը բաժակը այծի կաթ լցրեց: Փոքրիկը հաճույքով խմեց այն:

— Կյանքումս այսպիսի համեղ կաթ չեմ խմել,— ասաց Հայդին:

Գիշերը Հայդին իր հարդե անկողինը մազլցեց: Մարագի փոքրիկ պատուհանից լուսնի շողը ներս էր ընկել: Հայդին խաղաղ քուն մտավ, ականջը՝ սոճիների մեջ աղմկող քամուն, դեմքին՝ անուշիկ ժպիտ:







## ԱՐՈՏԱՎԱՅՐՈՒՄ

Առավոտյան Հայդին արթնացավ զիլ սուլոցից: Աչքերը քացելուն պես տեսավ պատուհանից ներս հորդացող արևի պայծառ լույսը: Հուզված նա դուրս թռավ անկողնուց, շորերն արագ հագավ ու տնից դուրս վազեց:



Այծարած տղան՝ Պետերը, արդեն սպասում էր, որ պապի այծերն էլ միանան իր հոտին:

— Ուզո՞ւմ ես Պետերի հետ այծերը տանես արոտատեղ,— հարցրեց պապը:

— Շատ կուզեմ,— ուրախացավ Հայդին:

Պապը ուտելիք ու կաթ դրեց նրանց հետ, և Պետերը, Հայդին ու այծերը ձանապարհ ընկան:

Ամբողջ օրը Հայդին վազվզեց վառվռուն ծաղիկների մեջ ու խաղաց այծերի հետ: Ամենաշատը նրան դուր եկան պապիկի այծերը՝ Ծաղիկն ու Արջուկը: Պետերը Հայդիին ցույց տվեց արծվի՝ ժայռի լանջին հյուսած բույներ, ու միասին նայեցին՝ ինչպես էր թռչունը ձախրում օդում: Հայդին տեսավ ձյունապատ բարձր լանջերը, որ փայլում էին երկնքի կապույտի տակ: Կեսօրին երեխաները նստոտեցին սոճու տակ ու կերան պապիկի դրած կերակուրը: Հայդին արագ խմեց իր կաթը, ապա Պետերը նրան մի քիչ էլ տվեց՝ կթելով Ծաղիկին: Կաթը գոլ էր ու քաղցր:

— Մայրամուտին, երբ երկինքը կարմրեց մայր մտնող արևից, Պետերն ու Հայդին բռնեցին տան ձամփան: Երբեք առաջներում աղջիկն այդքան երջանիկ չէր եղել:







## ՊԵՏԵՐԻ ՏԱՏԸ

Այդ ամառ Հայդին ամեն օր Պետերի ու այծերի հետ գնում էր արոտավայր: Երեխաները մտերիմ ընկերներ դարձան: Լեռնային մաքուր օդից աղջիկը կազդուրվեց, ու մաշկը թխացավ: Երբ փչեցին աշնան պաղ քամիները, Հայդին սկսեց ավելի ուշ-ուշ բարձրանալ սարալանջերը:

Եկավ ձմեռը, ու լեռները ծածկվեցին ձյունով: Պետերը սկսեց գյուղի դպրոցը հաճախել: Տղայի տատիկը կարոտելու էր նրան, և Հայդին որոշեց նրան հյուր գնալ: Մի օր էլ պապը Հայդիին փաթաթեց վերմակներով ու շալերով, նստեցրեց փայտե սահնակին և քաշելով տարավ մինչև Պետերենց տուն: Պապը չէր սիրում հյուր գնալ և Հայդիին մուտքի մոտ մենակ թողնելով՝ հեռացավ:

Պետերի մայրը ներս հրավիրեց Հայդիին և ուղեկցեց տատիկի մոտ, ով, տան մի անկյունում նստած, ճախարակով թել էր մանում: Հայդին տեսավ, որ ծեր կինը կույր է, և նրա ձեռքը բռնելով՝ սկսեց նրան նկարագրել գեղեցիկ, ձյունապատ լեռները:

— Պատմիր պապիկիդ մասին, Հայդի,— խնդրեց ծեր կինը:— Մի ժամանակ ես նրան լավ գիտեի: Հիմա գրեթե լուր չունեմ:— Հայդին պատմեց՝ ինչպես է պապը փայտից տեսակ-տեսակ բաներ պատրաստում, ինչպես են ինքն ու Պետերը այծերին արոտ տանում: Տատիկը լսում էր ու ժպտում:

Այդ ձմեռ Հայդին հաճախ հյուր եկավ ծեր կնոջը՝ զվարթությամբ լցնելով նրա կյանքը:









## ԱՅՑԵԼՈՒՆԵՐ

**Ժ**ամանակն անցնում էր աննկատ: Ութ տարեկանում Հայդին արդեն ահագին բան էր սովորել պապից: Գարնան մի առավոտ նրանց տեսության եկավ Դորֆլիի պաստորը:

— Հայդին պետք է սովորի,— ասաց նա պապին,— տեղափոխվիր գյուղ, որ աղջիկը կարողանա մյուս երեխաների հետ դպրոց գնալ: Քեզ համար էլ վատ չի լինի. նորից կապրես նախկին դրացիներիդ կողքին:

Ծերունին հրաժարվեց.

— Հայդիին դպրոց հարկավոր չէ:

Նրա պատասխանը լսելով՝ պաստորը թափահարեց գլուխն ու հեռացավ: Իսկ հենց հաջորդ օրը եկավ մորաքույր Դիթին:


— Ես Հայդիին հետս Ֆրանկֆուրտ եմ տանում,— ասաց նա: Հետո պատմեց մի փոքրիկ աղջկա մասին, ով քայլել չէր կարողանում և ամբողջ օրը գամված էր անվասայլակին: Նրա հայրը փնտրում էր մի խելացի փոքրիկի, որ ընկերակցեր իր դստերը: Հայդին շատ հարմար էր: Պապը դեմ էր, որ թոռը հեռանար իրենից: Բայց մորաքույրը պնդեց:

— Դե, ուրեմն, տար, բայց էլ չվերադառնաս,— զայրացած նետեց ծերունին:

Հայդին ու մորաքույրը արագ հավաքվեցին: Աղջիկն ուզում էր գյուղում բոլորին հրաժեշտ տալ, բայց չհասցրեց:

— Դու նրանց Ֆրանկֆուրտից նվերներ կրերես,— ասաց մորաքույրը, և նրանք շտապեցին, որ գնացքից չուշանան:







## ՀԱՅԴԻՆ ՆՈՐ ԿՅԱՆՔ Է ՍԿՍՈՒՄ

Կլարա Սեսեմանն ամեն օրվա նման նստել էր անվասայլակին՝ Ֆրանկֆուրտի իրենց տան աշխատասենյակում: Աղջկա մայրը մահացել էր տարիներ առաջ, հայրը գործի բերումով հաճախ էր տնից բացակայում, և Կլարայի մասին հոգ էր տանում օրիորդ Ռոթենմայերը՝ մի շատ խստաբարո կին: Այժմ նա, հանգիստ նստած, կար էր անում, իսկ Կլարան շարունակ նեղվում էր ու անհանգստանում՝ սպասելով, թե երբ են Հայդիին բերելու:

— Երբ են տեղ հասնելու,— հարցրեց նա մեկ ժամվա ընթացքում երևի արդեն տասներորդ անգամ: Հենց այդ պահին դուռը բացվեց, և ծառան ներս հրավիրեց Հայդիին ու մորաքրոջը:

— Հը՛մմ,— մրմնջաց օրիորդ Ռոթենմայերը՝ իր նեղ աչքերով Հայդիին գննելով: — Աղջիկը շատ փոքր է: Կլարան արդեն տասներկու տարեկան է, և մենք սպասում էինք, որ նրան հասակակից ընկերուհի եք բերելու: Քանի՞ տարեկան է Հայդին:

— Ճիշտն ասած...,— կմկմաց Դիթին. նա չէր ուզում ստել:

— Ես ութ տարեկան եմ,— ասաց Հայդին:

— Իսկ ի՞նչ գրքեր ես կարդացել,— հարցրեց օրիորդ Ռոթենմայերը, և նրա ձայնը փոքր-ինչ սպառնալից հնչեց:

— Ոչ մի գիրք էլ չեմ կարդացել,— հայտարարեց Հայդին,— ես դեռ կարդալ չգիտեմ:

Օրիորդ Ռոթենմայերն ուղղակի ցնցված էր, բայց ձայն չհանեց:

— Դու կարող ես ինձ հետ դասեր առնել, Հայդի,— առաջարկեց Կլարան: — Ուսուցիչը շատ լավն է, թեև դասերը մի քիչ ձանձրալի են: Եթե երկուսով սովորենք, հետաքրքիր կանցնեն:



Աղջիկը քնքուշ ժպտաց: Հայդին զգաց, որ նա շատ բարի է, թեև այնքան էլ վստահ չէր, որ նոր կյանքն իրեն դուր կգա:







## ԵՐԿԱՐ ՕՐՎԱ ԱՎԱՐՏԸ

**Մ**որաքույր Դիթին շուտով գնաց, և Հայդին մինչև ճաշի ժամը մնաց Կլարայի հետ: Հետո եկավ Սերաստիան անունով ծառան և Կլարայի անվասայլակը հրելով՝ տարավ ճաշասենյակ:

Նման նրբագեղ սպասք ու գեղեցիկ սփռոց Հայդին երբեք չէր տեսել և շատ ուրախացավ, երբ իր ափսեի կողքին տեսավ սպիտակ հացի փափուկ, փոքրիկ մի բոքոն: Պետերի տատը հենց այդպիսի հաց էր սիրում: «Այս հացից նրան նվեր կտանեմ», — որոշեց Հայդին՝ հացն աննկատ գրպանը սահեցնելով:

Երբ Սերաստիանը նրա ափսեի մեջ միս դրեց, Հայդին հարցրեց.

— Սա ինձ համար եք դնում:

Սերաստիանը գլխով արեց՝ ժպիտը հագիվ զսպելով:

— Հայդի, քեզ վայելո՛ւչ պահիր, — սաստեց օրհորդ Ռոթենմայերը: — Տեսնում եմ՝ դեռ շատ բան ունես սովորելու: Երբեք մի՛ գրուցիր ծառաների հետ:


Օրհորդ Ռոթենմայերը խոսում ու խոսում էր վարքի կանոններից՝ ինչպես սենյակ մտնել, ինչպես դուրս գալ, ինչպես իրերը հավաք պահել, ինչպես շնորհքով ուտել... Օրհորդը խոսեց այնքան, մինչև Հայդին քնեց: Խեղճն այնքան հոգնած էր:

— Կյանքումս այսպիսի երեխա չեմ տեսել, — ճչաց օրհորդ Ռոթենմայերը: Կլարան ուրախ քրքջաց, և օրհորդն ավելի զայրացավ:

Բայց աղմուկն ու ծիծաղը Հայդիին չարթնացրին. ստիպված էին նրան գրկած տանել իր սենյակն ու պառկեցնել: Առաջին օրը Ֆրակֆուրտում ավարտվեց:

Առավոտյան արթնանալով՝ Հայդին չէր կարողանում հիշել՝ որտեղ է: Պատուհանից ո՛չ կանաչ խոտ էր երևում, ո՛չ սոճիներ:







Միայն բարձր շենքեր էին: Մի անսովոր տխրություն համակեց աղջկան:

Նախաճաշից հետո եկավ Կլարայի բարի ու համբերատար ուսուցիչը: Օրիորդ Ռոթենմայերը շտապեց նրան տեղեկացնել, որ Հայդին շատ է հետ մնում դասերից:

— Անգամ կարդալ չգիտի,— վրա տվեց նա,— վստահ եմ՝ սրա պատճառով Կլարան էլ է դասերից հետ մնալու:

Ուսուցիչը նրան հավաստիացրեց, որ ինքը երկու աղջիկների հետ էլ կպարապի: Նախ հարկավոր էր Հայդիին այբուբենը սովորեցնել: Ուզածին չհասնելով՝ օրիորդ Ռոթենմայերը փնջալով հեռացավ:

Մի քանի վայրկյան չանցած՝ դասասենյակից ուժեղ աղմուկ լսվեց. Ռոթենմայերը հետ սլացավ: Սեղաններից մեկը շրջված էր, դասագրքերը թափված էին հատակին, սև թանաքի բարակ շիթը կաթկթում էր գորգին: Հայդին չէր երևում:

— Հիմա՞ ինչ է արել այդ փորձանք երեխան:

— Պատահական ստացվեց,— արդարացավ Կլարան:— Հայդին դրսից ինչ-որ ձայն լսեց, ուզում էր մոտենալ պատուհանին, բայց սեղանին բախվեց. նա դիտմամբ չարեց:

Հայդին կանգնել էր շքամուտքի մոտ և շփոթված դուրս էր նայում:

— Ինձ թվաց՝ քամին է աղմկում սոճիների մեջ, բայց այստեղ ծառեր չկան:

— Հիմա՞ր աղջիկ, մենք անտառում չենք ապրում,— վրա տվեց օրիորդ Ռոթենմայերը:— Մեկ էլ նման բան ես արել, կպատժվես, հասկացա՞ր:

— Հասկացա,— ասաց Հայդին,— սրանից հետո տեղս հանգիստ կնստեմ:







## ԵԿԵՂԵՑՈՒ ԱՇՏԱՐԱԿԸ

Երեկոյան, երբ Կլարան հանգստանում էր, Հայդին տնից թաքուն դուրս եկավ՝ հուսալով գտնել մի տեղ, որտեղից կերևային իր սիրելի լեռները: Շուտով նա հանդիպեց իր տարիքի մի տղայի, որը փոքրիկ երգեհոն էր նվագում: Հայդին նրան հարցրեց՝ արդյոք քաղաքում նման տեղ կար:

— Փորձիր բարձրանալ եկեղեցու աշտարակը,— ասաց տղան,— կարող եմ հետդ գալ, եթե ուզում ես:

Երբ հասան եկեղեցի, Հայդին թակեց դուռը: Պահակը ոչ մի կերպ չէր հավատում, որ Հայդին ուզում է աշտարակը բարձրանալ: Նա արդեն որոշել էր աղջկան վռնդել եկեղեցուց, բայց տեսնելով նրա աղաչական հայացքը՝ մտափոխվեց:

— Արի՛ հետևիցս,— ասաց նա՝ բարձրանալով նեղ, գալարուն աստիճաններով: Երբ հասան աշտարակին, պահակը Հայդիին գրկեց ու բարձրացրեց այնպես, որ կարողանար նեղիկ պատուհանից դուրս նայել, բայց լեռները չէին երևում:


— Սա այն չէր, ինչ սպասում էի,— տխուր ասաց Հայդին:

Երբ նորից ներքևում էին, Հայդին պահակի սենյակի մոտ նկատեց մի զամբյուղ: Զամբյուղում մոխրագույն մեծ կատու կար՝ յոթ ձագուկները կողքին կուչ եկած:

— Ա՛խ, ինչ լավիկն են,— ասաց Հայդին: Նրա դեմքն այնպես պայծառացավ, որ պահակը թույլ տվեց ձագերից երկուսին վերցնել:

— Մեկը՝ ինձ, մեկը՝ Կլարային,— որոշեց Հայդին՝ փիսիկներին գրպաններում տեղավորելով:

Տուն հասնելով՝ Հայդին դռան զանգը տվեց: Սերաստիանն իսկույն բացեց դուռն ու շնչաց՝









արագ ներս արի: Բոլորը գնացել են ճաշելու, և օրիորդ Ռոթենմայերը շատ զայրացած է:

Հայդին փորձեց աննկատ մտնել ճաշասենյակ, բայց օրիորդը խիստ ձայնով ասաց.

— Քո վարքագիծն անտանելի է, Հայդի: Տնից առանց թույլտվության դուրս գալու և ուշ վերադառնալու համար դու կպատժվես: Ինչ կասես քեզ արդարացնելու համար:

— Մյանու, — լավեց պատասխանի փոխարեն:

— Հայդի, — բղավեց օրիորդը, — դու հանդգնում ես նման արարքներից հետո նաև ծաղրել ինձ:

— Ես Ձեզ չեմ ծաղրում, — հանգիստ ասաց Հայդին:

— Մյանու, մյանու:

— Սա արդեն չափից դուրս է, — ոտքի կանգնեց Ռոթենմայերը, — դուրս եկ սենյակից:

— Խնդրում եմ, օրիորդ, — աղաչեց Հայդին, — այդ ես չեմ, փիսիկներն են:

— Փիսիկները..., — ծղրտաց օրիորդը, — Սերաստիան, անմիջապես եկ այստեղ ու ազատվիր այդ սարսափելի արարածներից: — Եվ Ռոթենմայերը փոթորկի պես դուրս սուրաց ճաշասենյակից:

Բայց կատուներն արդեն տեղավորվել էին Կլարայի գոգին, ու աղջիկները սկսեցին խաղալ նրանց հետ:

— Սերաստիան, օգնիր մեզ: Թող փիսիկները մեզ մնան, որ խաղանք հետները: Թաքցրո՞ւ նրանց մի տեղ:

— Անհո՞գ եղեք, օրիորդ Կլարա, — խոստացավ Սերաստիանը: — Ես նրանց կպահեմ ձեղնահարկում՝ զամբյուղի մեջ, որ ապահով լինեն:

Աղջիկներն ուրախ ժպտացին:







## SUSԻԿԸ

**Թ**եև Հայդին ու Կլարան լավ ընկերուհիներ էին, բայց աղջիկը դեռ կարոտում էր իր տունը: Ամեն օր նա Կլարային պատմում էր Պետերի, այծերի մասին և ավելացնում.

— Գիտե՞ս, ես շատ շուտով պետք է տուն վերադառնամ:

Նա շարունակ հացիկներ էր հավաքում Պետերի տասի համար, և երբ օրիորդ Ռոթենմայերը գտավ դրանք ու դեն նետեց, Հայդին շատ տխրեց:

Մի օր Կլարան ասաց Հայդիին, որ իր տատիկը գալու է իրեն այցելության:

— Տատիկին բոլորը սիրում են, քեզ էլ նա դուր կգա, — ասաց Կլարան:

Եվ նա իրավացի էր: Տատիկը բարի ժպիտ ուներ և փայլուն, ուրախ աչքեր: Հայդին իսկույն սիրեց նրան: Ամեն երեկո, երբ Կլարան պառկում էր հանգստանալու, տատիկը նստում էր Հայդիի կողքին ու կարդում նրա համար: Մի օր տատիկը գեղեցիկ պատկերներով մի գիրք բացեց. կանաչ դաշտերում գառներ ու այծեր էին արածում: Նկարը տեսնելուն պես Հայդին սկսեց արտասվել:

— Կարոտում ես լեռները, փոքրիկս, — ասաց տատիկն ու գրկեց աղջկան:

— Հենց կարողանաս այս հրաշալի գիրքը կարդալ, քեզ կնվիրեմ, — խոստացավ նա:

Մի քանի օր չանցած՝ ուսուցիչը զարմացած ասաց, որ Հայդին արդեն կարողանում է կարդալ: Նույն օրը՝ ճաշի ժամին, Հայդին իր ափսեի կողքին մի գեղեցիկ գիրք գտավ:



— Դա քոնն է, — ասաց տատիկը, և նրա աչքերում փոքրիկ մի կայծ փայլեց:







## ՏՈՒՆԸ ԿԱԽԱՐԴՎԱԾ Է

**Ե**րբ տատիկը մեկնեց, Հայդին սկսեց ավելի ուժգին կարոտել տունը: Նա շատ քիչ էր ուտում և գունատ էր: Գիշերները լալիս էր այնքան, մինչև քունը տաներ:

Մի առավոտ ծառաները տան դուռը բաց գտան: Կարծելով, թե գող է մտել, սկսեցին տան ամեն մի անկյունը զննել, բայց ամեն ինչ տեղում էր: Երբ հաջորդ օրը դուռը կրկին բաց գտան, Սեբաստիանը որոշեց գիշերը չքնել ու հսկել:

Կեսգիշերից քիչ անց Սեբաստիանը լսեց դռան բացվելու ձայնը: Ծառան դուրս վազեց ու տեսավ՝ ինչպես է ուրվականի պես մի կերպարանք անհետանում աստիճանների վրա:

Առավոտյան բոլոր ծառաները ուրվականի մասին էին խոսում: Երբ պարոն Սեսեմանը լսեց այս պատմությունը, հրավիրեց ընտանեկան բժշկին՝ Քլասսենին՝ միասին դիմավորելու ուրվականին:

Գիշերը, երբ ուրվականն աստիճաններով ներքև իջավ, որ դուռը բացի, պարոն Սեսեմանն ու բժիշկն արդեն սպասում էին նրան: Ուրվականը Հայդին էր, որ քնի մեջ ստվերի նման շրջում էր:



— Սիրելի աղջիկս, այդ ինչ ես անում,— մեղմ ձայնով հարցրեց պարոն Սեսեմանը՝ աշխատելով չվախեցնել նրան: Հայդին աչքերը բացեց: Նա շփոթված տեսք ուներ:

— Չգիտեմ,— շվարած պատասխանեց նա ու սկսեց լաց լինել: Եվ փոքրիկ, գունատ երեխան պատմեց բժշկին, թե որքան է տխրում ու կարոտում իր պապին ու լեռները:

— Ես միայն մի ելք եմ տեսնում,— ասաց բժիշկը,— Հայդին պետք է տուն վերադառնա:







## ՎԵՐԱԴԱՐՁ

Հաջորդ օրը օրիորդ Ռոթենմայերին կարգադրեցին հավաքել Հայդիի իրերը: Կլարան շատ տխուր էր, որ բաժանվելու է ընկերուհուց, բայց հայրը խոստացավ, որ հաջորդ ամառ Կլարան կայցելի Հայդիին:

Նախաձաշից հետո Կլարան Հայդիին լի զամբյուղով հացիկներ նվիրեց Պետերի տատի համար: Պարոն Սեսեմանը Հայդիին մի ծրար տվեց, որ հանձնի պապին:

— Տես՝ չկորցնես ծրարը, — զգուշացրեց նա:

Սեբաստիանը Հայդիի հետ գնացք նստեց, որ ուղեկցի նրան մինչև Դորֆլի: Գյուղում Հայդիի ճամպրուկը դրին հացթուխի սայլի վրա, որ պապի տուն հասցնեն: Հայդին Սեբաստիանին ասաց, որ ինքը մենակ էլ կարող է տուն հասնել: Եվ այդպես էլ արեց:

Ճանապարհին նա կանգ առավ Պետերի տան մոտ, որ տեսնի նրա տատիկին: Ծեր կինը շատ ուրախացավ՝ Հայդիին տեսնելով: Իսկ երբ Հայդին նրան տվեց հացով լի զամբյուղը, նա գրկեց աղջկան ու ասաց.

— Դու մեզ օրհնանք ես բերել, աղջիկս, բայց ամենամեծ օրհնությունը ինքդ ես:

Պետերի տատի ու մոր հետ մի քիչ զրուցելուց հետո Հայդին շարունակեց իր ճանապարհը դեպի տուն՝ պապի մոտ: Շատ շուտով երևաց իրենց խրճիթը. Պապը, նստարանին նստած, ծխում էր: Հայդին վազեց ու ամուր գրկեց նրան՝ անդադար «պապիկ, պապիկ» ասելով: Ծերունու աչքերը լցվեցին, ու նա թոռանը գրկեց այնպես, ասես երբեք բաց չէր թողնելու:

— Պապիկ, ես տուն եմ վերադարձել, — ասաց Հայդին, — և այլևս չեմ հեռանա:







Նա պապին հանձնեց պարոն Սեսեմանի ուղարկած ծրարը: Ծրարում նամակ կար, ուր գրված էր, թե ինչու է Հայդին տուն վերադառնում: Պարոն Սեսեմանը նաև մի քիչ փող էր ուղարկել: Ծերունին որոշեց այդ գումարով թոռան համար մի կարգին մահճակալ գնել, բայց Հայդին ասաց, որ կնախընտրեր դրա փոխարեն ամեն առավոտ Պետերի տատի համար մի թարմ բոքոն գնել:

Որպեսզի պապը ժամ առաջ տեսնի, թե ինքը որքան վարժ է կարդում, Հայդին վերցրեց Աստվածաշունչն ու սկսեց ընթերցել: Պապը հպարտ էր ու գոհ: Հաջորդ օրը կիրակի էր, և նա խոստացավ Հայդիին Դորֆլիի եկեղեցին տանել:

Առավոտյան, հենց եկեղեցու զանգերը հնչեցին, Հայդին ու պապը, ձեռք ձեռքի տված, քայլելով իջան գյուղ: Բոլորը զարմացած էին, նաև ուրախ՝ ծերունուն եկեղեցում տեսնելով: Երկար տարիներ նա գյուղ չէր իջել:

Պատարագից հետո պապը մոտեցավ պաստորին՝ նրա հետ զրուցելու:

— Երկար մտածեցի քո խորհրդի մասին, — ասաց նա, — դու իրավացի ես: Ներիր ծերուկիս համառությունը: Այս ձմեռ կտեղափոխվենք Դորֆլի, որ Հայդին կարողանա դպրոց հաճախել:


Երբ եկեղեցուց դուրս էին գալիս, գյուղացիները խմբվեցին, որ ողջունեն ծերունուն: Հայդին նրան երբեք այդքան ուրախ չէր տեսել:

Տունդարձի ճանապարհին Հայդին ու պապը կանգ առան Պետերի տան մոտ, որ Պետերի մորն ու տատիկին հայտնեն ուրախ լուրը:



— Ես ու Պետերը միասին դպրոց կգնանք, — ուրախ ասաց Հայդին Պետերին:







## ԲԺԻՇԿԸ ԳՅՈՒՂ Է ՄԵԿԵՆՈՒՄ

**Տ**րանկֆուրտում Կլարան անհամբեր սպասում էր, թե երբ է կրկին Հայդիին տեսնելու: Բայց դեռ ամառվա սկզբին բժիշկ Քլասսենը վատ լուր հայտնեց նրան.

— Կարծում եմ՝ դեռ այնքան ուժեղ չես, որ կարողանաս ճանապարհորդել:

Լացը մի կերպ խեղդելով՝ Կլարան ասաց.

— Այդ դեպքում Դոնք գնացեք, բժիշկ:

— Բայց ինչ եմ անելու այնտեղ, Կլարա, — զարմացած հարցրեց բժիշկը:

— Այն, ինչ ես էի անելու: Կհանդիպեք Հայդիի պապին, կտեսնեք Պետերին ու նրա այծերին, իսկ հետո կպատմեք ինձ: Եվ բոլորին կհանձնեք նվերները, որ պատրաստել եմ նրանց համար: Խնդրում եմ, բժիշկ Քլասսեն: — Կլարան բռնեց բժշկի ձեռքը. — Եթե համաձայնեք կատարել խնդրանքս, խոստանում եմ ամեն օր ձկան յուղ խմել:


Բժիշկը ծիծաղեց.

— Դե եթե նման խոստում ես տալիս, անկարող եմ մերժել: Երբ պետք է գնամ:

— Վաղը, — ժպտալով պատասխանեց աղջիկը:

Կլարան խնամքով դասավորեց նվերները՝ բրոյա գլխարկ Հայդիի համար, տաք շալ ու մի տուփ թարմ թխվածք Պետերի տատիկի համար, ծխամորձի թութուն պապիկի և համեղ նրբերշիկ բոլորի համար: Աղջիկն անհամբեր սպասում էր, որ իմանա՝ արդյոք Հայդին կհավանի իր նվերը: Բժիշկն իրեն ամեն ինչ կպատմեր:







Պապիկն այծերն էր կթում, երբ Հայդին հուզմունքից փայլող դեմքով ներս վազեց:

— Գալիս են: Բժիշկ Բլասսենն է գալիս: Կլարան ու տատիկն էլ հետը կլինեն:

Ու կրկին դուրս վազեց՝ ողջունելու Ֆրանկֆուրտից ժամանող հյուրերին:

Բայց բժիշկ Բլասսենը մենակ էր: Հայդին շատ տխրեց, երբ իմացավ, թե ինչու Կլարան չի կարողացել գալ:

— Գուցե մյուս գարնանը նա այնքան կազդուրվի, որ կարողանա գալ,— ասաց բժիշկը՝ ինքն իր ասածին չհավատալով: Պապիկը ողջունեց բժշկին, ամուր սեղմեց նրա ձեռքն ու հյուրասիրեց համեղ նախաճաշով՝ այծի կաթով, պանրով ու սառը մսով:

— Ֆրանկֆուրտում նման համեղ կերակուրներ չես ուտի,— ասաց բժիշկը:

Ծերունին գոհ ժպտաց:

— Կլարային այսպիսի սնունդ է հարկավոր,— ասաց նա բժշկին:— Վստահ եմ, որ առողջ սնունդն ու լեռնային թարմ օդը հրաշքներ կարող են գործել:

Նախաճաշից հետո բերեցին մի մեծ արկղ, որի մեջ Կլարայի ուղարկած նվերներն էին: Հայդին ուրախ-ուրախ բացում էր դրանք: Ամենահուզիչ նվերը Պետերի տատիկի համար ուղարկված թարմ բլիթներով տուփն էր:

— Հենց հիմա նվերները տանում եմ տամ,— ասաց Հայդին:

Երբ միասին քայլում էին դեպի Պետերի տուն, Հայդին ասաց.

— Երբեք այսքան երջանիկ չեմ եղել:

Բժիշկը ծիծաղեց, բայց աղջկա խոսքերը շատ հուզեցին նրան:









## ԴՊՐՈՑՈՒՄ

Հոկտեմբեր ամսին՝ բժիշկ Քլասսենի գնալուց մեկ ամիս չանցած, սարերում ուժեղ ձյուն տեղաց, և պապիկը, Հայդին ու այծերը սարերից իջան գյուղ՝ Դորֆլի: Պապիկը մի հին, խարխուլ տուն էր գտել եկեղեցու կողքին, բաժանել էր այն երկու մասի. մի կեսը՝ իր ու Հայդիի, մյուսը՝ այծերի համար: Մեծ վառարանը տունը լավ տաքացնում էր: Պատերին գեղեցիկ պատկերներ կային, որոնց Հայդին սիրտն ուզածի չափ կարող էր նայել:

Աղջիկը սկսեց դպրոց հաճախել ու շատ սիրեց այն: Նա գիտեր, որ Պետերն իր սահնակով է դպրոց գալիս, ու անհանգիստ սպասում էր նրան: Պետերը, սակայն, հաճախ էր դասերից բացակայում, անգամ արևոտ օրերին, երբ դպրոց հասնելը դժվար չէր:


— Ինչո՞ւ ես ուշ-ուշ գալիս դպրոց, — մի օր հարցրեց Հայդին:

Տղան սկզբից չցանկացավ պատասխանել, հետո խոստովանեց, որ դասերին դժվարանում է, որովհետև կարդալ չգիտի:

— Դու կսովորես, — ասաց Հայդին, — ես քեզ անպայման կօգնեմ:

Պետերն փոքր-ինչ տրտնջաց, բայց Հայդին համոզեց նրան: Սկսեցին այբուբենից, ինչպես Ֆրանկֆուրտի ուսուցիչն էր անում: Պետերն ավելի կանոնավոր սկսեց հաճախել դպրոց, և ամեն երեկո Հայդիի հետ նոր տառեր ու բառեր էր սովորում: Ձմեռվա կեսերին նա արդեն տասիկի Սաղմոսարանն էր կարդում՝ մեծ ուրախություն պատճառելով նրան:







## ՆԱՄԱԿԸ

**Դ**որֆլիում ձմեռը շատ ուրախ անցավ: Հայդին չնկատեց էլ՝ ինչպես սկսվեց մայիս ամիսը: Լեռնային վտակները, սնվելով հալչող ձյունից, սկսեցին աղմուկով վար՝ դեպի հովիտը սլանալ: Ժամանակն էր, որ կրկին սարերը բարձրանային:

Հայդին այս ու այն կողմ էր վազվզում՝ խոտերի մեջ վայրի ծաղիկներ փնտրելով, այտերին՝ արևի ջերմությունը, ականջը՝ սոճիների ձյուղերով սուրացող քամու ձայնին: Պետերը նույնպես վերադարձել էր այժերին նայելու: Այժերն էլ էին գոհ, որ սարերում են ու արածում են մատղաշ կանաչ խոտը:

Ամեն առավոտ Հայդին դուրս էր վազում Պետերին դիմավորելու՝ երջանիկ, որ նորից անհոգ օրեր են միասին անցկացնելու:

Մի օր Պետերը մի նամակ բերեց, որ գյուղի փոստատարն էր նրան հանձնել: Նամակը Կլարայից էր: Հայդին հուզված վազեց պապի մոտ: «Սիրելի Հայդի, — գրում էր Կլարան, — մենք գալիս ենք քեզ տեսության: Հույս ունենք գալ վեց շաբաթից՝ բուժումս ավարտելուց հետո: Հայրս պետք է Փարիզ մեկնի, բայց ինձ հետ կգա տատիկը: Անհամբեր սպասում եմ մեր հանդիպմանը»:

Օրիորդ Ռոթենմայերը, բարեբախտաբար, մնալու էր Ֆրանկֆուրտում: Նամակը ստորագրված էր՝ «Քո հավատարիմ բարեկամ՝ Կլարա»: Հայդին ուրախությունից իրեն կորցրել էր: Վերջապես Կլարան գալու էր լեռները՝ իրեն տեսնելու:

Եվ ահա հունիսյան մի օր Հայդին տեսավ, թե ինչպես է մի տարօրինակ թափոր սարալանջով վեր բարձրանում: Երկու մարդ բերում էին անվասայլակը, որին նստած էր Կլարան՝ շալերով









ու վերմակներով փաթաթված: Նրանց հետևից, ձիուն նստած, գալիս էր Կլարայի տատիկը:

— Եկան, եկան,— բղավեց Հայդին ու վազեց պապին լուր տալու, որ միասին գնան հյուրերին ընդառաջ:

Երբ Կլարայի անվասայլակը զգույշ վայր դրին, աղջիկը զարմանքով շուրջը նայեց.

— Ինչ գեղեցիկ է այստեղ,— ասաց նա,— եթե կարողանայի վազել, ինչ ասես, միասին կտեսնեինք:

— Ես ամեն ինչ քեզ ցույց կտամ,— խոստացավ Հայդին: Նա Կլարայի անվասայլակը քշեց դեպի սոճիները, որ նա կարողանա լսել քամու ձայնը: Հետո Կլարային տարավ փարախ՝ իր սիրելի այծիկների՝ Ծաղիկի ու Արջուկի մոտ:

Նախաճաշի ժամանակ տատիկը նկատեց, թե մաքուր օդից Կլարայի ախորժակն ինչպես էր բացվել: Ավելի ուշ Հայդին տատիկին ու Կլարային ցույց տվեց բուրավետ մարագում զգած իր անկողինը:

— Ինչ հրաշալի ննջարան է,— ասաց Կլարան,— խոտն այնքան փափուկ է, պատուհանիցդ էլ պարզ երևում է կապույտ երկինքը:


— Եթե տատիկը համաձայնի, մենք ուրախությամբ քեզ մի քանի շաբաթով կհյուրընկալենք:

— Կլարային իսկապես օգտակար կլինի այստեղ մնալը,— ժպտաց տատիկը,— ի սրտե շնորհակալ եմ:

Աղջիկներն ուրախությունից շողում էին: Երկու փոքրիկները միասին սկսեցին ծրագրեր կազմել:

Հաջորդ առավոտյան Հայդին ու Կլարան նստել էին բակում:







Կլարան վայելում էր սոճիների բույրը: Նա արդեն սկսել էր իրեն ավելի լավ զգալ, քան Ֆրանկֆուրտում: Պապիկը նրանց համար երկու բաժակ թարմ՝ վրան սեր բռնած կաթ բերեց:

— Սա Ծաղիկի կաթն է, Կլարա, խմիր, որ կազդուրվես:

Շուտով եկավ Պետերը՝ Հայդիի հետ այծերին արոտավայր տանելու:

— Կլարան մեր տանն է, այսօր չեմ կարող գալ,— ասաց Հայդին,— ո՛չ էլ վաղը, ո՛չ էլ մյուս օրը: Պապիկը խոստացել է մի օր մեզ երկուսիս տանել, բայց այսօր մնում եմ Կլարայի հետ:

Պետերը խոժոռվեց, բայց ձայն չհանեց, այլ շրջվեց և անգամ հետ չնայելով՝ այծերին քշեց սարն ի վեր:

Աղջիկները տատիկին խոստացել էին ամեն օր գրել: Հայդին տնից թուղթ ու թանաք բերեց, և տաք արևին նստած՝ սկսեցին նամակ գրել: Այդ օրն էլ ճաշեցին դրսում. տատիկն ասել էր, որ Կլարան մաքուր օդի ու արևի կարիք շատ ունի: Երբ վերջացրին, Հայդին Կլարայի անվասայլակը քշեց ծառերի տակ՝ ստվերոտ մի տեղ, ուր քամին քնքշորեն խառնում էր նրանց մազերը: Ամբողջ երեկո աղջիկներն իրար պատմում էին այն ամենը, ինչ կատարվել էր իրենց բաժանումից հետո:

Արևն արդեն մայր էր մտնում: Հայդին տեսավ Պետերին, որ այծերին տուն էր քշում: Աղջիկը ձայն տվեց, բայց Պետերը չպատասխանեց. անգամ հետ չնայեց:









## ՆՎԵՐ ՏԱՏԻԿԻՆ

Արդեն մի քանի շաբաթ՝ ամեն առավոտ, պապիկը Կլարայի անվասայլակը բակ էր հանում, և աղջիկները օրն անցկացնում էին դրսում: Եվ ամեն առավոտ պապիկը խնդրում էր Կլարային.

— Փորձիր կանգնել:

Նրան չնեղացնելու համար Կլարան, հենվելով ծերունու ձեռքին, փորձում էր ոտքի ելնել, բայց իսկույն ճշում էր.

— Չեմ կարող, ցավում է:


Ծերունին, միևնույնն է, ամեն օր հորդորում էր նրան մի քանի վայրկյան ավելի երկար կանգնել: Աղջիկը նախաձաշում և ձաշում էի դրսում՝ մաքուր օդին: Նրան դուր էր գալիս այժի թարմ կաթը և Հայդիից ավելի արագ էր խմում-վերջացնում: Մաքուր օդի ու թարմ կերակուրների շնորհիվ գիշերները նա շատ լավ էր քնում, իսկ առավոտներն արթնանում էր առույգ ու հանգստացած:

Մի օր Կլարան տեսավ արահետով բարձրացող մարդկանց, որոնք շալակած բերում էին երկու մահճակալ, հետն էլ՝ անկողին՝ մաքուր սավաններ, վերմակներ ու բարձեր: Բերել էին նաև նամակ Կլարայի տատիկից: Նամակում գրված էր, որ մահճակալները Հայդիի ու Կլարայի համար են: Հայդին պետք է իր մահճակալը տաներ Դորֆլի՝ գյուղի տուն, որ ձմռանն այնտեղ քնելիս չմրսեր, իսկ Կլարայի մահճակալը պետք է մնար պապիկի տանը՝ պատրաստ նրա հաջորդ այցելության համար:

Մարագը խոտից ազատելով՝ պապիկը օգնեց, որ մահճակալները բարձրացնեն ու դնեն այնպես, որ երկու աղջիկներն էլ կարողանան պատուհանից դուրս նայել:

— Այսօրվանից շնորհքով մահճակալների վրա ենք քնում,— ուրախ հայտարարեց Հայդին, ու երկուսով ծիծաղեցին:







## ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

**Մ**ի պայծառ առավոտ պապիկը որոշեց աղջիկներին տանել այծերի արոտավայր: Սկզբից նա դուրս բերեց Կլարայի անվասայլակը, հետո տուն մտավ աղջիկներին բերելու: Հենց այդ ժամանակ էլ եկավ Պետերը: Տղան շատ դառնացած էր, որ Կլարան հայտնվել էր ու Հայդիին խլել իրենից: Կլարայի անվասայլակը տեսնելով՝ նա զայրույթից պոռթկաց, ոտքով ուժգին հարվածեց սայլակին ու չարանենգ ժպիտով նայեց, թե ինչպես է այն, սարնիվար գլորվելով, մաս-մաս լինում:

Պապիկը չէր հասկանում, թե ուր է անհետացել անվասայլակը, բայց նա որոշեց, որ իրենք, միևնույնն է, կգնան արոտավայր: Նա, Կլարային գրկած, բարձրացրեց այնտեղ ու զգուշորեն նստեցրեց Հայդիի կողքին՝ տաք խոտերին փռած վերմակի վրա: Երբ Պետերը նրանց տեսավ, հոնքերը կիտեց ու դեմքը շրջեց:

— Միայն այստեղի վայրի ծաղիկները տեսնես, Կլարա,— ասաց Հայդին: — Գուցե Պետերն ու ես կարողանանք քեզ այնտեղ տանել:

Պետերը Կլարայի հետ գործ ունենալ չէր ուզում, բայց երբ տեսավ, որ աղջիկն իսկապես չի կարողանում ինքնուրույն կանգնել, զղջաց արածի համար ու համաձայնեց օգնել նրան: Հայդին ու Պետերը միասին օգնեցին Կլարային ոտքի կանգնել: Հետո Հայդին քնքշորեն համոզեց նրան գոնե մի քայլ գցել:


— Ցավում է,— ասաց Կլարան,— բայց առաջվանից ավելի քիչ: Կլարան մի քայլ էլ արեց, հետո՝ հաջորդը:

— Հայդի, — բղավեց նա,— ես կարող եմ, կարող եմ քայլել:



Մեկ շաբաթից տասիկը գալու էր Կլարային տանելու: Այդ ամբողջ շաբաթ՝ ամեն օր, Հայդին







ու պապիկն օգնում էին Կլարային մի փոքր ավելի երկար քայլել: Երբ տատիկը վերջապես եկավ, նա Կլարային հագիվ ճանաչեց:

— Թշիկներդ կլոր են ու կարմրիկ,— բացականչեց նա,— իսկ ո՞ր է սայլակդ:

Պատասխանելու փոխարեն Հայդին Կլարային օգնեց կանգնել, ու միասին քայլեցին դեպի տատիկը. երկուսի դեմքերն էլ շողում էին:

Տատիկը շունչը պահել էր: Հետո մերթ ծիծաղելով, մերթ լաց լինելով՝ նա գիրկն առավ թոռնուհուն:

Հաջորդ օրը Կլարային մեծ անակնկալ էր սպասում: Փարիզից եկավ հայրը: Երբ նա տեսավ, որ աղջիկը քայլում է, հուզմունքից խոսելու ունակությունը կորցրեց. գրկել էր Կլարային ու անդադար համբուրում էր:

— Մենք հավերժ պարտական ենք ձեզ,— կրկնում էր նա,— ասացե՛ք՝ ինչ եք ցանկանում, և ես անպատճառ կկատարեմ ձեր ցանկությունը:

Պապիկն ասաց, որ իր միակ վարձատրությունը Կլարային ուժեղ ու առողջ տեսնելն է:

— Ես ցանկանում եմ, որ Ֆրանկֆուրտից բերված իմ մահճակալը տանք Պետերի տատիկին,— ասաց Հայդին:— Թող նա ձմռանը տաք ու հարմար տեղում քնի:

Աղջկան խոստացան մահճակալն անհապաղ ուղարկել Պետերի տատիկին:

Եկավ բաժանման տխրալի պահը: Աղջիկներն իրար գրկեցին: Կլարան խոստացավ հաջորդ ամառ կրկին հյուր գալ: Հայդին նրանց ձեռքով արեց այնքան, մինչև տեսադաշտից անհետացան: Եվ պապ ու թոռ միասին վերադարձան տնակը՝ երկուսի համար էլ այդքան թանկ ու սիրելի:







## ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Յոհաննա Սպայրին (Շպիրին) ծնվել է 1827 թ. Հիրցելում՝ շվեյցարական լեռնային մի փոքրիկ գյուղում: Ընտանիքում վեց երեխա կար: Տանը, որտեղ նրանք մեծանում էին, շատ էին սիրում գրքեր ու երաժշտություն: Սպայրին ամուսնացավ, երբ քսանհինգ տարեկան էր, և ունեցավ մեկ որդի: Նա սիրում էր ճանապարհորդել, շատ ջանք ու ժամանակ էր նվիրում բարեգործությանը: «Հայդի» վեպի համար միջավայր է ծառայել պալյան բնաշխարհը, որտեղ հեղինակն անցկացրել է բազմաթիվ ամառներ: Վեպը լույս է տեսել, երբ Սպայրին հիսունհինգ տարեկան էր: Գրքի անօրինակ հաջողությունը նրա համար անսպասելի էր: Սպայրին մահացել է 1901 թ.՝ յոթանասունչորս տարեկան հասակում: Թեև նա հեղինակ է ավելի քան քսանհինգ գրքերի, որոնք տպագրվել են կենդանության օրոք, նրա ստեղծած ամենասիրելի հերոսուհին բարեսիրտ Հայդին է:



*«Դասական մատենաշարում» լույս են տեսել նաև.*

**Ալիսը հրաշքների աշխարհում • Փոքրիկ տիկիներ  
Երեք հրացանակիրներ • Գանձերի կղզին  
20 000 լյո ջրի տակ • Փինոբիո • Օզի կախարդը**

**Դիզայնը՝ Անդրեա Միլսի • Շապիկի տպագրությունը՝ Մեթյու Քեյլիի**

HEIDI ՀԱՅԴԻ

ՀՏԴ 830-32 Սպայրի  
ԳՄԴ 84.4 Շվեյց-44  
Ս 815

Սպայրի Յոհաննա  
Ս 815 Հայդի: Դասական մատենաշար/ Յոհաննա Սպայրի: Վերապատումը՝ Ռ. Ռանդայի:  
Անգլ. թարգմ.՝ Ա. Ջիվանյանի; Նկ.՝ Ի. Սաշևայի.— Եր.: «Ջանգակ» հրատ., 2013.— 48 էջ:

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն հրատարակության որևէ հատված չի կարող վերարտադրվել մեխանիկական, էլեկտրոնային, պատճենահանման, տեսագրման և հայտնի կամ անհայտ այլ եղանակներով՝ առանց հրատարակչի հետ նախնական համաձայնեցման: Նաև չի կարող շրջանառության մեջ դրվել ներկա հրատարակությունից տարբեր շապիկով: Նշված պայմանները պարտադիր են բոլոր սպառողների համար:

Copyright © QED Publishing 2012  
www.qed-publishing.co.uk

Armenian translation © 2013 "Zangak-97" LLC  
© «Ջանգակ-97» ՍՊԸ (թարգմանության համար), 2013

ՀՏԴ 830-32 Սպայրի  
ԳՄԴ 84.4 Շվեյց-44

ISBN 978-9939-68-060-6

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2  
Հեռ.՝ (+37410) 23 25 28, ֆաքս՝ (+37410) 23 25 95  
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ.կայք՝ www.zangak.am



# Հայրի

Հայրին որբուկ է: Նա ապրում է պապի ու իր ժիր  
այծիկների հետ Հվեյցարիայի լեռներում: Մի օր գալիս է  
Հայրիի մորաքույրն ու աղջկան տանում մեծ ու աղմկոտ  
քաղաքը: Հայրիի կյանքն ընդմիջտ փոխվում է, բայց  
Փոքրիկն ամբողջ հոգով ուզում է վերադառնալ գյուղ՝  
լեռներում ծվարած իր տնակը՝ ծերունի պապի մոտ:

ՎԵՐԱՊԱՏՈՒՄԸ՝ ՌՈՆ ՌԱՆԴԱԼԻ  
ԱՆԳԼԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՎԱՐԴ ԶԻՎԱՆՅԱՆԻ  
ՆԿԱՐԱԶՄԱՐԴՈՒՄԸ՝ ԻՎԱ ՍԱՇԵՎԱՅԻ



[www.zangak.am](http://www.zangak.am)

ISBN 978-9939-68-060-6



9 789939 680606